63(07)

ԱԳՐՈ-ՀՈՎԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

3/3

ԵՐԵՎԱՆ
1936

Տպարան Նոր-Բայազետի
Շրջգործկոմի
Գլավլիտի լիազոր Ս—№ 53
Տիրաժ 500 օրինակ

ՄՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

Հաստատված է Համ.Լ.Կ.Կ.Մ. Կենտկոմի բյուրոյի 1936 թ. փետրվարի 22-ի նիստում։ Առձանագրություն № 202 կետ № 8։ Հաստատված է Միութենական Հոլովոգլավոմատի կողմից։

ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԱԳՐՈ-ԶՈՎԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Ագրո-զոովետ տեխնիկական քննությունները անց են կացվում կոլտնտեսություններում հացահատիկային բրիգադավարների, ոգակավարների, ձիապահների և կոլտնտեսականների միջև։

Ագրո-զոոտեխնիկական քննությունները հանդիսանում են գյուղատնտեսության կադրերի մոբիլիզացիայի մասսայական մի ձև՝ 7—8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու մասին ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները կատարելու, կադրերի ագրոտեխնիկական գիտելիքները ստուգելու, նրանց վարպետությունը բարձրացնելու և բարձր բերքատվության համար պայքար կազմակերպելու ուղղությամբ։

1. ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա) Ագրո-զոովետ տեխնիկական քննությունների նախապատրաստումն անցկացնել քննություն տվող բոլոր կադրերի մեջ, ծավա-

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

լելով սոցիալիստական մրցություն սեփական գործի տեխնիկան տիրապետելու և «դերազանց» քննություն տալու համար.

բ) Քննություն ավողների մրցակցության անմիջական պայմանն է լինելու ուսուցումը, սիստեմատիկ ինքնազարգացում արտադրական աշխատանքի հետ սեփական գիտելիքները լայնացնելու ուղղությամբ, վորոնք անհրաժեշտ են աշխատանքի բարձր արտադրողականության համար հաջող պայքար մղելու տեսակետից.

գ) Քննություն ավողը պետք է գիտելիքներ ունենա այն ծավալով, վոր սահմանված է Համ ԼԿՅԵՄ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի կողմից։

2. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Ագրո-զոովետ քննություններն անց են կացվում 1936 թ. ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը.

ա) Առավել պատրաստություն ունեցող ընկերները, վորոնք կարող են առանց հատուկ պատրաստության հանձնել քննությունները— տալիս են քննություններն առաջին հերթին.

բ) Այն ընկերների համար, վորոնք պահանջում են մեծ նախապատրաստում, պետք է

Ձեռնարկերպեն համապատասխան տեխնիկական խմբակները և կուրսերը։

Քննություն չտվողները և անբավարար գնահատական ստացողները պետք և կրկնակի քննություններ տան մինչև 1936 թ. դեկտեմբերի 1-ը (ժամկետ տրվում և կոմիսիաների կողմից)։

3. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

ա) Քննություններն ընդունող կոմիսիայի կազմի մեջ մտնում են՝

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Մասնագետ-ինժեները, ավագ գյուղատնտես կամ ավագ զոոտեխնիկ, կամ վիրաբույժ (նախագահ)—քաղաքաժնի պետը, կոմյերիտմիության կոմիտեյի քարտուղարը, ստախանովականները և պրոֆկազմակերպության ներկայացուցիչները։

ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ. — Մասնագետ-ավագ գյուղատնտեսը կամ ավագ մեքենավարը (նախագահ), ՄՏԿ-ի դիրեկտորի տեղակալ քաղ. գծով, կոմյերիտմիության ներկայացուցիչը, ստախանովականները և պրոֆմիության ներկայացուցիչը։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. — Շրջհողքաժնի մասնագետ (նախագահ), կոլտնտեսության նախագահ, կոմյերիտական կազմակեր-

պության քարտուղարն ու առաջավոր կոլտնտեսականները։

բ) Կոմխիան նախորոք կազմում է քննություն ավող բանվորների և կոլտնտեսականների ցուցակն ու սահմանում է նրանց քննությունների ժամկետը.

գ) Քննությունները տեղի յեն ունենալու հատուկ պատրաստված վայրերում, կամ աշխատանքի ժամանակ դաշտում, բրիգադում։ Քննությունների հանձնման որվա մասին (նշելով վայրը և ժամը), հանձնվում է ՄՏԿ-ների, խորհտնտեսության բոլոր բանվորներին, կոլտնտեսականներին, վորոնք հրավիրվում են կոմխիայի աշխատանքներին մասնակցելու համար։

դ) Քննություններն ընդունող կոմխիայի անդամները, քննություն ավողներին տալիս են հարցեր Համ ԼԿՑԵՄ կենտկոմի և ԽՍՀՄ-ի հողժողկոմատի կողմից սահմանված պահանջների ծավալի համաձայն, հաշվի առնելով նրանց գիտելիքների մակարդակը և գործնական աշխատանքը։ Քննությունները հանձնողներին տրվում են հետևյալ գնահատականները՝ «գերազանց», «լավ», «բավարար».

յե) Բոլոր քննություն ավողներին կոմիսիան տալիս է հատուկ վկայական ապրո-կոռ-

վիճ տեխնիկական քննությունը տալու մասին հանում է յեզրակացություն, նրանց հետագա ուսուցման և ոգտագործման համար (տեղափոխում ավելի բարձր, կամ ավելի ցածր վորակի աշխատանքի).

գ) Քննությունը չբռնողներին կոմիսիան տալիս է վորոշ ժամանակ պատրաստվելու համար.

4. ԱԳՐՈ-ԶՈՎԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շրջաններում ագրո-զոովետ տեխնիկական քննությունները գլխավորվում է շրջհոգբաժինների, ԼԿՅԵՄ շրջկոմների, ՄՏԿ-ների և խորհտնտեսության դիրեկտորների կողմից, վորոնք՝

ա) Կազմակերպում են մասսայական-բացատրական աշխատանք քննությունների նշանակության մասին, 7—8 միլիարդ փութ հացի համար տարվող պայքարի և տեխնիկան մինչև վերջ ու լավագույն կերպով ոգտագործել կարելի պատրաստելու տեսակետից.

բ) Կազմակերպում են ագրո-զոովետ տեխնիկական ուսուցումն, ապահովում են խմբակները դասատուական կազմով, դասագրքերով, կոնսուլտացիայով և այլն։

գ) Քննթուղթերին պատրաստվողների միջև կազմակերպում են մրցակցություն՝ քննությունները «գերազանց» գնահատականով տալու համար.

դ) Քննությունները արդեն ավածների համար կազմակերպում են ուսուցում, նոր ավելի բարձր ծրագրով և ոգնում են քննությունների չբռնողներին յուրացնելու անհրաժեշտ գիտելիքները քննությունը տալու համար.

յե) Լուսաբանում են մամուլում ագրոզոոտեխնիկական ուսման և քննությունների նախապատրաստման ու անցկացման ընթացքը.

զ) Ղեկավարում են քննությունները ընդունող կոմիսիայի աշխատանքները։

ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՎԱՐՆԵՐԻ, ՈՂԱԿԱՎԱՐՆԵՐԻ ԱԳՐՈՏԵԽՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ինչ մասերից է բաղկացած բույսը, նրանց կազմությունը և նշանակությունը։

2. Ինչ նյութեր են անհրաժեշտ բույսին աննդարարության համար, և վորտեղից է նա ստանում այն։

3. Ինչպես է բույսը յուրացնում ածխաջրածինը և ինչի համար։

4. Ինչպես է կատարվում բույսի շնչառությունը։

5. Ինչ նշանակություն ունի ջուրը բույսի կյանքի համար։

6. Ինչպես տարբերել հողերի տեսակներն ըստ նրանց մեխանիկական կազմի։

7. Ինչ նշանակություն ունի բույսի համար հողի հումուսը (որգանական և փթաց նյութերը) և ինչպես կարելի յե նրան կուտակել հողում։

8. Ինչ է ստրուկտուրան (կազմություն) և ինչպես ստեղծել հողի լավ ստրուկտուրա։

9. Ինչ և ցանքաշրջանառությունը և նրա նշանակությունը։

10. Լավագույն նախորդները հացաբույսերի համար։

11. Ինչպես և շաղկապվում ցանքաշրջանառությունը հացահատիկային պետառաջադրանքի և անասնապահության զարգացման հետ։

12. Հացաբույսերի համար հողի մշակման ձևերը.

ա) Հողի գարնան մշակումը գարնանացանի համար.—փոցխումը, ցրտահերկի և ցելերի մշակում, կուլտիվացիա և կրկնավար, գարնանվար։ Ինչպիսի գործիքներով մշակել հողը, ինչ խորությամբ, ինչպիսի ժամկետներում, ինչ միջոցներով։

բ) Աշնանացանի գարնանային մշակումը—փոցխումը, ժամանակները, ձևերը։ Ինչպես պայքարել գարնանացանի կեղեվակալման դեմ։ Հողի աշնան մշակում գարնանացան հացաբույսերի համար։ Խոզանավար (յերեսավար) և նրա նշանակությունը։ Ցրտահերկն ինչ գործիքներով կատարել, խորությունը, ժամկետները։ Ինչումն և կայանում հողի աշնանացանի մշակման նպատակը։

գ) Ցելերի մշակումը—վարի ժամկետները, ինչի համար անհրաժեշտ և աշնանային վարը (սև ցել) կամ վաղ գարնանային վար։ Վարի գործիքները։

Ցելի մշակում—կուլտիվացիա և կրկնավարը, ցելի նախացանքային մշակումը—ժամկետը, ձևը և գործիքները։

13. Մոլախոտերի տարածված տեսակները և պայքար նրանց դեմ.

ա) Ինչ հիմնական հատկություններ ունեն մեր շրջանի ամենաշատ տարածված մոլախոտերը։

բ) Ինչպես պայքարել մոլախոտերի դեմ, հողի մշակման և քաղհանի ժամանակը։

գ) Ինչպես անջատել մոլախոտերի սերմերը հացահատիկային սերմերից։

դ) Ինչ դեր և կատարում ցանքաշրջանառությունը մոլախոտերի դեմ պայքարում։

14. Ինչ հիմնական հացաբույսերի տեսակներ են զարգացած մեր շրջանում, նրանց հատկանիշները և բիոլոգիական առանձնահատկությունները։

15. Ինչպես ստանալ և պահպանել բարձրորակ սերմացու։

ա) Ինչ և կոչվում սերմաբուծական հոգա-

մասն, ինչպես նրան պետք է մշակել և տանել խնամքը։

բ) Ախտահանման նպատակները և ձևերը։

գ) Ինչ ձևով է սերմացուն յենթարկվում զտմանը։

դ) Ինչ է սերմերի սելեկցիա (ընտրություն) և ինչպես այդ կիրառել կոլխոզում։

16. Ցանքի ձևերը, շարքացանի առավելությունները։

Ինչպես է կարգավորվում շարքացանը, ինչպես է ստուգվում շարքացանի աշխատանքների ճշտությունը։ Սերմի ընկնելու լավագույն հաակությունը։ Ինչպես է կանոնավորվում շարքացանի խորությունը։

17. Ցանքի մշակումը.

ա) Աշնանացանի փոցխում—ժամկետները, ագրոտեխնիկան և գործիքները։

բ) Գարը— ժամկետները, նորմաները և ձևերը։

գ) Բաղհան—ժամկետները, քանակը ձևերը։

դ) Ցանքսերի պարարտացում ինչով պարարտացնել, ինչպիսի ժամկետում և ինչպիսի ձևերով։

18. Ինչ է պահանջվում սերմացուից։ Ինչպես վորոշել սերմացուի մաքրության և

ծլունակության տոկոսը, ինչպիսի նորմաներ են սահմանված հողժողկոմատի կողմից։ Ինչն և վորոշում սերմացուի տնտեսական պիտանիությունը։ Ինչ կախում ունի ցանքսի նորման սերմի տնտեսական պիտանիությունից։

19. Ինչ և սերմերի յարովիզացիան և նրա կատարման ձևերը։

20. Մեքենաների և գործիքների կազմությունը և նրանց գործածության տիրապետումը.

ա) Ինչպես կատարել գութանի ճիշտ ուսուցանումը։

բ) Կոմբայնի կազմությունը և նրա աշխատեցնելը։

գ) Այլ բերքահավաքի գործիքների կառուցվածքը և նրանց գործածության տեխնիկան։

դ) Մալատիլկայի կառուցվածքը և նրա գործածությունը։

յե) Հասկացողություն տրակտորի կառուցվածքի մասին։

21. Ինչ հանքային նյութեր են ոգտագործվում հացաբույսերի համար։

22. Ինչպես ավելացնել գոմաղբի ստացումը, յերբ պարարտացնել գոմաղբով։ Ինչպես ոգտագործել ձիերի գոմաղբը, «գիշերային վոռ-

կին» և այլ պտրատանյութերը։ Ինչ է կոմպոստը և նրա պատրաստման տեխնիկան։

23. Ինչպես կազմակերպել պայքարը կուլուսների դեմ հացահատիկի բերքահավաքի ժամանակ։

24. Ինչպես կազմակերպել սերմացուի չորացման աշխատանքները դաշտում, պահեստում և հատուկ չորանոցներում։

25. Ինչպես է սերմացուի պահպանման կարգը պահեստներում։ Սեղի դեմ պայքարի միջոցները։

26. Ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը դաշտում, բրիգադներում և ողակներում։ Ինչ ձևով պետք է կատարվի յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի հաշվառումը։

Ինչպես են կառուցվում կոլխոզի մշտական բրիգադները։ Ողակների կազմակերպման սկզբունքները։

Բրիգադի, ողակի մեծությունը։ Հողակտորների ամրացումը բրիգադներին ցանքաշրջանառության կապակցությամբ։

Արտադրական միջոցների դասավորումը և ամրացումը բրիգադների և ողակների միջև։ Ինվենտարի պահպանումը և խնամքը։ Քաշող

ուժի խնամքը և կերակրումը։ Անհատական գործարքը բրիգադում, ողակում։

Ինչպես կազմել բրիգադի, ողակի աշխատանքային ծրագիրը։ Ամենորյա նարյադներ։ Յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի հաշվառումը բրիգադում, ողակում։

Պետական հանձնումների պլանը։

Պլանի ժամանակին կատարման կազմակերպումը։ Հացագնումներ։

ՏՐԱԿՏՈՐԻՍՏՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎԵԼԻՔ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տրակտորիստը պետք է գիտենա՝

1. ՏՐԱԿՏՈՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Ներքին այրման շարժիչի աշխատանքի սկզբունքը։ Շարժիչի բոլոր հիմնական աշխատող մասերի նշանակությունը, գործողությունը և փոխգործողությունը։ Շարժիչի սնման սիստեմը։ Մագնետոյի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և մասերը լուսավորման և կայծ տալու լարերի դասավորման սխեման, շարժիչի յուղման սիստեմի կառուցվածքը և աշխատանքը։ Հովացման սիստեմը։

2. Կցորդման մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը։ Փոխանցման մեխանիզմի սխեման (մատորից մինչև տանող անիվները կամ թրթուրները) ղեկի մեխանիզմը։ Նրա շարժումն ու կառուցվածքը և տրակտորին ցանկացած աշխատանքին փոխելու պայմանները։

2. ՏՐԱԿՏՈՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1. Շարժիչի ղեկավարման կանոնները և աշխատեցնելը։ Շարժիչի (բեգուլիրովկայի) կանոնները։ Վորոշել շարժիչի անկանոն աշխատանքի պատճառները և իմանալ նրանց կարգավորելը։ Կարողանալ կարգավորել կարբուրատորի աշխատանքը։

2. Ճիշտ ղեկավարել տրակտորը բոլոր գյուղատնտեսական աշխատանքների մեջ և փոխադրման բոլոր պայմաններում։ Իմանալ տրակտորի հետ տալու կանոնները կցվող գործիքներին միացնելու համար ինչպես և տրակտորի ուսանավկա տալը մոլոտիլկայի աշխատեցնելու համար։

Վորոշել (ըստ աշխատանքի բնույթի մատորի բեռնվածությունը) տրակտորի շարժման հնարավոր արագությունը։ Իմանալ տեխնիկական անվտանգության կանոնները մատորի և կցվող գործիքների շարժման և աշխատանքի պայմաններում։

3. ՏՐԱԿՏՈՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՌԵՄՈՆՏԸ

1. Ճշտիվ իմանալ տրակտորի հանձնելիությունը

43337
A 3608
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

տալու կանոնները։ Տեսքից ճանաչել վառելանյութերի և յուղանյութերի տեսակները, որոնք գործադրվում են տրակտորի և կցվող գործիքների համար։

Իմանալ յուղանյութերի գործածությունն ըստ տարվա յեղանակների։ Կարողանալ վորոշել տեսակը և վորակը վառելանյութի և յուղանյութերի ու գիտենալ վորոշել յուղի բաղադրությունը։ Յուղելու և փոխելու ժամանակը։ Իմանալ բացատրել մատորի համար պահանջվող ջրի վորակը։ Իմանալ ջրի փոխելու ժամանակները յեղանակի փոփոխության հետ։

2. Միանգամայն ճիշտ իմանալ ամեն մի հերթափոխության դեպքում, հողի մշակման, ցանքի և բերքահավաքի հասարակ մեքենաների համար պահանջվող տեխնիկական խնամքի կանոնները։ Կարողանալ վորոշել տրակտորի և կցվող գործիքների ամենորյա ստուգման ժամանակ փոքր խանգարումները և նրանց վերացումը։

3. Կարողանալ քանդել և հավաքել տրակտորը։ Իմանալ քանդելն ու հավաքելը տրակտորի առանձին մեխանիզմները։ Իմանալ զազորները և նրանց տեխնիկական թերաշափը։ Իմանալ ճիշտ չափման և գործիքների (պրի-

քորները)։ Ունենալ տարբերական զիտելիքներ մեքենաղների տեխնոլոգիայից։ Ծանոթ լինել մոնտաժի և սլեսարների գործին։ Կարողանալ վերջնել դրությունը և կատարել բեգուլիրովկա տրակտորի մեխանիզմների և առանձնապես առաջին անիվների պատշգամբների, կարողանալ թեթև ռեմոնտ կատարել, պրատիրկան անել կլապանները, մաքրել պորշինները, մաքրել ցիլինդրի շապիկը և այլ ընթացիկ ռեմոնտ։

4. ԿՑՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իմանալ աշխատանքի կառուցվածքի սկզբունքը, հողի մշակման գործիքները տրակտորներին կցվող (գութան, դիսկավոր փոցխ, կուլտիվատոր և այլն) նրանց մասերի գործողությունը, ինչպես և ցանքի ու բերքահավաքի գործիքների։ Իմանալ կցվող գործիքների և մեքենաների տեխնիկական խնամքը, կցվող գործիքների աշխատանքի կանոնները, կցվող գործիքների կանոնավորման կանոնները։

5. ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

Հողը և նրա առանձնահատկությունը (ձեր կոլխոզի, սովխոզի և այլն), հողի բերքատվությունը։ Բույսերի ջուրը և սնունդը։ Բերքատու հող

ստեղծելու պայմանները, հողի ստրուկտուրան և նրա ագրոտեխնիկական նշանակությունը։ Բույսերի զարգացման և աճման հիմնական պայմանները՝ լույս, ջերմություն, ոդ, ջուր և սնունդանյութեր (հանքային նյութեր և ազոտ)։ Ջեր կոլխոզում մշակվող հիմնական կուլտուրաները։ Մոլախոտերը և պայքար նրանց դեմ։ Հողի մշակման սիստեման՝ յերեսվար, ցրտահերկ, հողի նախապատրաստական մշակում։ Հերկի և շարքահերկ կուլտուրաների մշակումը։ Գութանը և նրա ձևվիշը։ Խոր վարի գութաններ և հողի կուլտուրականացումը։

Սերմացուն, ցանքի ժամկետը, բույսերի խնամքը, բերքահավաքը, բերքահավաքի ժամկետը, կորուստների դեմ պայքարը գյուղատնտեսության մեջ, հատկապես բերքահավաքի ժամանակ։

6. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գյուղատնտեսական զանազան աշխատանքներում տրակտորի ցուցանիշներն արտադրողականության և նավթամթերքի նորման։

2. Տրակտորային միավորումների աշխատանքները գյուղատնտեսական աշխատանքներում տարբեր բնադավառներում։

3. Որացուցային պլանի կազմելը տրակտորային խմբի համար։

4. Տրակտորային աշխատանքի սկզբնական հաշվառումը։

5. Տրակտորիստների վարձատրման սիստեմը։

6. Նավթամթերքների պահպանման կանոնները։

7. Հակահրդեհային միջոցառումները գյուղատնտեսական աշխատանքների զանազան բնագավառներում։

ԶՈՎԵՏ ՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ՖՆՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ՀՈՎԻՎՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԵԼԻՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Հովիվները պետք է իմանան՝

1. ԲՈՒԾՈՒՄ ՅԵՎ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ

1. Վոչխարի որդանիզմի առանձնահատկությունները համեմատած ընտանի այլ կենդանիների հետ.

2. Հանրապետության, տվյալ շրջանի վոչխարի ցեղերը, պլանային ցեղ.

3. Նորմալ, նուրբ և կոպիտ տիպի վոչխարների եքստերյերի տարբերող հատկանիշները.

4. Վոչխարների տարիքի վորոշելն ըստ ատամների։

5. Գիտենալ վոր տարիքին և վոչխարը սեռական հասունության գալիս և յերբ առաջին անգամ կարելի յե թողնել զուգավորման։

6. Ինչ և մաքուր բուծումը, մետիզացիան, գիտենալ ինչպիսի անհատապես ոգտակար հատկանիշներով պետք է խոյերին, մայրերին ընտ-

ել (տվյալ անտեսության պլանային ցեղերի նկատմամբ)։ Գիտենալ թե ինչ հատկանիշն է պետք խոյերին և մայրերին խոտանման յենթարկել.

7. Ինչու համար է կատարվում վոչխարների բոնիտիրովկան և գաղափար ունենալ բոնիտիրովկայի սկզբունքների մասին.

8. Մայրերի և խոյերի նախապատրաստումը զուգավորման համար.

9. Ինչպես պետք է կատարել ամեն տեսակի զուգավորությունները և գաղափար ունենալ արհեստական բեղմնավորման մասին.

10. Գիտենալ վորոշել խոյի յեկող մաքինների, նրանց ցանկության տեվողությունը և յերբ և կրկնվելու նրանց խոյի գալու ցանկությունը.

11. Մայրերի հղիության տեվողության շրջանը.

12. Շենքի և հոտի նախապատրաստման հիմնական կանոնները զուգավորման համար։

2. ԿԵՐԱԿՐՈՒՄ

1. Հասկացողություն վոչխարի կերերի մասին և նրանց կերային արժեքները (կոշտ, խրոտացրած, հյութալի, արմատապալարապտուղները, սիլոս, արոտներ)։

2. Գիտենալ տարբերել լավորակ կերն անվորակից։

3. Ինչու չի կարելի կերակրել ոորբոսնած կամ այլ վատորակ կերերով։

4. Վոչխարի, մասնավորապես գառան որգանիզմի համար ինչու յեն անհրաժեշտ հանքային նյութերը, ինչպիսի հանքային նյութեր պետք է գործադրել, դրա համար գիտենալ հանքային նյութերով կերակրելու նորմաները։

5. Հասակավոր վոչխարների և գառների կերակրման համար անհրաժեշտ զանազան տիպի կերակրամանների և այլ գործիքների կազմությունը։

6. Պատկերացում ունենալ վոչխարների համար կերի նորմաները և ռացիոներ կազմելու մասին։ Իմանալ որվա աշխատանքների դասավորությունը մսուրային և արոտային շրջաններում։ Գիտենալ անասնակերը ճիշտ կերակրել ինչպես վոչխարանոցում, նույնպես և բինայում և այլ վայրերում։

7. Կերակրման կանոնները զանազան շրջաններում։

8. Ջրելու տեխնիկան մսուրային և արոտային շրջաններում։ Ինչպիսի ջրով պետք է ջրել վոչխարներին։

9. Տոհմային վոչխարների և խոյերի կերակրման առանձնահատկությունները։

10. Վոչխարների մսուրային շրջանից արոտային և արոտայինից մսուրային փոխադրելու կանոնները և կարգը։

11. Արոտավայրերում վոչխարներին և գառներին խնամելու հիմնական կանոնները։ Տարբեր սեռի և հասակի վոչխարների արածեցնելու տեխնիկան։

12. Ինչպես են փոխվում արոտավայրերն տարվա տարբեր յեղանակներին։

13. Գերացման համար վոչխարներ ընտրելու կանոնները և արոտավայրերում վոչխարների գերացման հիմնական կանոնները։

14. Արոտավայրերի խոտակալումը և նրա վորակը։

15. Գաղափար ունենալ արհեստական արոտավայրերի և նրանց ոգտագործման մասին։

3. ԾԻՆԸ ՅԵՎ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ

1. Հղի մայրերի խնամքի և պահպանման կանոնները։

2. Հղի մայրերի կերակրման կանոնները, կերերի տեսակները նրանց հղիության տարբեր շրջաններում, նույնը նաև տարբեր տեսակի

վոչխարների համար (կոպտաբրդավոր, կիսակոպտաբրդավոր և նրբաբրդավոր)։

3. Վոչխարների վիժում առաջացնող պատճառները և նրանց կանխելու միջոցառումները։

4. Ծնի ժամանակ առաջին ոգնություն հասցնելը։

5. Ինչպես մոր տակ կարելի յե գառներին մեծացնել և վոր գառներին մեծացնել մոր տակ։

6. Գառներին ծծմայրներին տալը։

7. Փոքր գառներին կաթնառատ վոչխարների տակ մեծացնելը կամ կովի կաթով կերակրելը։

8. Գիտենալ գառներին ծծից կտրելու ժամանակը (հասակը) և կանոնները։

9. Վոչխարների համարակալման ձևերը։

10. Գառների կերակրելը խտացրած կերերով և խտացրած կերերի նորմաները տարբեր հասակի անասունների համար (ըստ ցեղերի)։

4. ԽՆԱՄՔ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

1. Գաղափար ունենալ վոչխարանոցների կառուցվածքի, վոչխարների համար անհրաժեշտ ծավալի ոդափոխության, լուսավորության մասին։

2. Ինչպես պետք է կառուցել լողարան-ներ դաշտում և վոչխարանոցներին կից.

3. Շենքերի նախապատրաստման կանոն-ները մսուրային շրջանի համար։

4. Վոչխարաբուծության մեջ գործադրվող անհրաժեշտ ինվենտարը, առանձին յուրաքան-չյուր կամպանիաների համար. ինչպես զուգա-վորում, ծինը, խուզը, կիթը և այլն։

5. Ինչպիսի վոչխարները պետք է կթվեն։ Ինչպես նախապատրաստել վոչխարների 2 խուզ, խուզի կանոնները և վոչխարների խնամքը խու-զից հետո։

6. Վոչխարների խնամքը և պահպանումն ամռանը և ձմռան շրջաններում։

7. Վոչխարների մաքրելը, ախտահանումը, ոջի կտրելը և դուրս տանելը և այս միջոցա-ռումների կիրառման ժամանակը։

8. Հոտի շների խնամքը և պահպանումը։

9. Նախնական հաշվեռվության ձևերը։

10. Գիտենալ մորթին հանելը և պահելը։

5. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

1. Գիտենալ տարբերել հիվանդ վոչխարն առողջից։

2. Գիտենալ վարակիչ հիվանդությունների դեմ պրոֆիլակտիկ միջոցառումները։

3. Գաղափար ունենալ վոչխարների հիմնական հիվանդությունների մասին, ինչպես ծաղիկը, սիբիրական ախտը, քոսը, վարակիչ վիժում, աչքերի նեխում, տափակ և ատամոքային վորդեր և այլն։

4. Ինչու վոչխարաբուծական տնտեսություններում անհրաժեշտ է արոտավայրերի փոփոխում կատարել։

5. Ինչու չի կարելի վոչխարներին արածեցնել ճահճոտ և խոնավ արոտավայրերում։

6. Ինչու չի կարելի վոչխարներին ջրել կեղտոտած և հոտած ջրերով։

7. Գիտենալ ախտահանիչ նյութերը։

8. Պճեղների կտրելը, վորդերի հանելը և վերքերի բուժումը։

9. Կարողանալ լողացնել քոսոտած վոչխարներին։

10. Գիտենալ մատղաշներին կռտելը, պոչերի կտրելը, վորդերից մաքրելը, ճանաչել անհրաժեշտ դեղորայքը վերքեր բուժելու համար (ախտահանում և ճանճերի ձվերի դեմ պայքար).

11. Իմանալ հոտի առողջացման համար տնտեսության զոովետերինարկումները։

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Բրիգադիրի և հովվական բրիգադի բանվորների իրավունքները և պարտականությունները։

2. Բրիգադի արտադրական պլանը, առաջադրանքը բեղմնավորման, ծնի, հոտի վերարտադրման, ապրանքային մթերքի հանձնման (մին, կաթ, բուրդ և մորթի) և քանակական ու վորակական ցուցանիշների մասին։

3. Հովվական բրիգադի աշխատանքի վարձատրման հրահանգը և կարողանալ կազմել աշխատանքի վարձատրման տախտակները։

ԶՈՏԵԽՄԻՆԻՄՈՒՄԻ ՀՆՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ԿՈՎ ԿԹՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԳՐՎԵԼԻՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Կով կթողը և հորթապահը պետք է գիտենան՝

1. Խոշոր յեղջյուրավոր անասունների ցեղերը։

2. Տվյալ շրջանի պլանային ցեղերը, որոնք ընդունված են որպես ազնվացնող.

3. Տեղական և ցեղային անասունների կաթնատվությունը, կաթի յուղի տոկոսը, կենդանի քաշը։

3. Առաջավոր անասնապահների նվաճումները կաթնատվության և հորթերի որակական աճի բարձրացման ասպարեզում.

5. Մեխիզացման լավ կիրառման խնամքի նշանակությունն անասունների մթերատվությունը բարձրացնելու խնդրում.

6. Արտադրող ցուլերի ընտրությունը և նրանց ոգտագործման տեվողությունը.

Կով կթողը և հորթապահը պետք է կարողանան՝

1. Վորոշել կովի ցուլի գալու ցանկությունը։

2. Ինչքան ժամանակ և տեվում կովի ցուլի գալու ցանկությունը և վորքան ժամանակից հետո նա կրկնվում է.

3. Վոր հասակից կարելի յե աբրու և եզ հորթերին թողնել զուգավորման և վոր ժամանակից նրանց պետք է իրարից անջատ պահել։

4. Կովերի հղիության շրջանի տեվողությունը և ցամաքեցնելու ժամկետը։

5. Արհեստական սերմանման կիրառման կանոնները.

6. Արտաքին նշաններով վորոշել կովերի ծնի ժամանակը.

7. Վորոշել կովերի հղի լինելը.

8. Ծնի և բեղմնավորման հաշվառում կատարել։

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կով կթողը և հորթապահը պետք է գիտենան՝

1. Մարսողության որգանների կազմությունը.

2. Խոշոր յեղջյուրավոր անասունների մարտողության առանձնահատկությունները.

3. Կուրծի կազմությունը և կաթի առաջացումը.

4. Սաղմի զարգացումը կովի արգանդում։

ԿԵՐԱԿՐՈՒՄ

Կով կթողը և հորթապահը պետք է իմանան՝

1. Կաթնատվությունը բարձրացնելու խնդրում տարբեր տեսակի կերերի նշանակությունը.

2. Հերթականություն կովերի կերակրման մեջ.

3. Հանքային աղերի նշանակությունը.

4. Ի՞նչ է կենսապահ և մթերատու կերը.

5. Լավագույն կով կթողները և հորթապահները ինչպես են կերակրում։

6. Պահպանման և կերակրման ժամանակ անասունների կորուստի դեմ պայքարի հիմնական կանոնները։ Ցուլ արտադրողին ինչով և ինչպես են կերակրում։

Կով կթողը և հորթապահը պետք է կարողանան՝

1. Վորոշել անասունների վորակը նրա արտաքին տեսքից և հոտից.

2. Կերի ռացիոն կազմել հաշվի առնելով առանձին կենդանիների անհատական առանձնահատկությունները.

3. Կերը պատրաստել (կտրատումը, խառնելը, խմորումը).

Կով կթողը և հարթապահը պետք է իմանան՝

1. Կրծի կանոնավոր խնամքը.

2. Կովերը կթելու կանոնավոր մեթոդը.

3. Կաթի և կաթնամանների մաքրության համար անհրաժեշտ պահանջները.

4. Ի՞նչպես կթել կովը և լավագույն կով կթողը քանի անգամ է կթում։

Հարթապահը և կով կթողը պետք է իմանան՝

1. Ինչպես պետք է կրծի մասամբ կատարել.

2. Կաթը սերզատել.

3. Յուղի տոկոսը վորոշել.

4. Կաթը քամել, չափել, կշռել և պահել։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՋՐԵԼԸ

Հարթապահը և կով կթողը պետք է գիտենան՝

1. Կենդանիների պահանջը ջրի նկատմամբ՝ ինչպես ամռան, նույնպես և ձմռան շրջանում.

2. Անասունների խմելու ջրի ջերմության աստիճանը.

3. Առանձին կովերի ջրելու առանձնահատկությունները.

4. Սվառապայիլկանների առավելությունները։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Հորթապահը և կով կթողը պետք է գիտենան՝

1. Գոմի կազմությունը և կահավորումը.

2. Հս կահրդեհային միջոցառումները.

3. Զոոգիգիենայի պահանջներն անասունների պահպանման և խնամքի նկատմամբ.

4. Անասունները գոմում դասավորելու լավագույն ձևերը։

ՀՈՐԹԵՐԻՆ ԽՆԱՄԵԼԸ

Հորթապահը և կով կթողը պետք է գիտենան՝

1. Հորթերին ձեռքով կերակրելու նշանակությունը, վորպես հորթերին խնամելու միակ ճիշտ մեթոդը.

2. Հորթերի մարսողության առանձնահատկությունները նրանց կյանքի առաջին շրջանում.

3. Հորթին տրվող կաթի ջերմության աստիճանը.

4. Հորթին տրվող կաթի որակն քանակը.

5. Խիժի նշանակությունը և խիժով առատ կերակրելը.

6. Վորքան ժամանակ պետք է հորթին կերակրել մոր կաթով.

7. Ճերը կարելի է հորթին կերակրել յերեսս քաշած կաթով, կոշտ կերով և ինչպես այդ ճիշտ կատարել.

8. Կերերի ընտրությունը հորթերի համար։

9. Լավագույն սատխանովական հորթապահները հորթերի քաշի ինչպիսի աճ են տվել։

10. Հորթանոցի կահավորումը, ինամքը, անհատական և խմբային վանդակներ.

11. Հորթերին գրոսանք կազմակերպելու լավագույն ձևերը։

Հորթապանը և կթողը պետք է կարողանան՝

1. Ընդունել նորածին հորթին.

2. Կշռել հորթերին.

3. Հորթին տրվելիք կաթի քամելը, չափելը, տաքացնելը.

4. Հորթերին մաքրելը.

5. Հորթերին արածեցնելը.

6. Ծնի, կերակրման և կշռման հաշվառում կատարելը.

7. Չափել գոմի և կաթի ջերմությունը։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հորթապանը և տավարապանը պետք է գիտենան՝

1. Կենդանու հիվանդության նշանները.

2. Հիվանդ անասունին առաջին ոգնություն հասցնելը.

3. Ինչպես կանխել վարակիչ հիվանդությունները (պրոֆիլակտիկ միջոցառումները).

4. Ինչպես են պայքարում վարակիչ հիվանդությունների դեմ, որոնք յերևացել են շրջանում.

5. Ստամոքսի և աղիքների հիվանդությունների նշանները.

6. Հորթերի և մեծահասակ անասունների կերակրումը ստամոքսի և աղիքների հիվանդության դեպքում.

7. Ինչպես պայքարել բոռի հարսնյակների դեմ.

8. Ինչպես պայքարել կաշվի հիվանդությունների դեմ և բժշկության ձևերը.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հորթապահը և կով կթողը պետք է գիտենան՝

1. Կով կթողի և հորթապահի իրավունքները և պարտականությունները.

2. Լավագույն կթողները և հորթապահները ինչպես են կազմակերպում աշխատանքը.

3. Բեռնվածության նորմաները.

4. Ներքին կարգապահության կանոնները.

5. Ինչպիսի ցուցանիշների համար են վարձատրվում և պարգևատրվում կթողները և հորթապահները։

ԶՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՆՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ԽՈԶԱՊԱՀՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԳՐՎԵԼԻՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Խոզապահը պետք է գիտենա՝

1. ԽՈԶԵՐԻ ԲՈՒԾՈՒՄ

1. Հասկացողություն խոզի որդանիզմի կազմության մասին.

2. Հասկացողություն խոզերի ճիշտ մարմնակազմի մասին, ինչպես և մարմնակազմի մթերատվության վրա ազդող թերությունների մասին.

3. Մայրերի և վարազների արտադրողական աշխատանքի ժամանակը և տևողությունը.

4. Խոզերի հիմնական ցեղերի նկարագիրը.

2. ԽՈԶԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Մայրերի և վարազների սեռական որդանների կազմությունը.

2. Հղիության շրջանի տևողությունը, վերջինիս ծնի ժամկետը բեղմնավորվելուց հետո,

կարողանալ տարբերել հղի խոզերին նրանց հղիության շրջանի յերկրորդ կեսից.

3. Խոզի սեռական հասունության գալուժամանակը, սեռական ցանկության տեվողությունը նրա կրկնման շրջաններում.

4. Սեռական ցանկություն ունեցող մայրերի հայտնաբերելը.

5. Վնր հասակից և ինչպիսի դրությամբ (կենդանի քաշ և սնվածություն) մայրերին կարելի յե զուգավորման թողնել.

6. Խոզերի զուգավորման հրահանգները և կարողանալ զուգավորումը ճիշտ անցկացնել արտային և մնուրային շրջաններում.

7. Մնուրային շրջանում դաղափար ունենալ խոզերի արհեստական սերմանման մասին.

8. Մայրերի և վարազների նախապատրաստումը զուգավորման կամպանիայի համար.

9. Մեկ վարազին տրվող բեռնվածությունը և նրա ոգտագործման կարգը.

10. Վնր հասակից եդ խոճկորներին կարելի յե անջատել վարազիկներից։

3. ՄԻՆԸ ՅԵՎ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Հղիության շրջանում մայր խոզերի կե-

գակրման և խնամքի կանոնները և պայմանները.

2. Յուրը պետք է հղի մորն առանձնացնել առանձին գաղջյահում։ Կարողանալ մորը և գաղջյանը նախապատրաստել ծնի համար.

3. Հասկացողություն վիժում առաջացնող թուլ, այլանդակ կամ մեռած խոճկորներ ծնելու պատճառների մասին.

4. Ծնվող մայրերի խնամքի տեխնիկան, կարողանալ անցկացնել ծիները.

5. Խոճկորների կենդանի քաշի աճման նորմաները և հասկացողություն խոճկորների նորմալ զարգացման մասին.

6. Խոճկորների խնամքի տեխնիկան մինչև նրանց ծծից կտրելը և նրանց ֆերմայի գերացման բաժիններին հանձնելը։ Գիտենալ վիր հասակից կարելի յե յամորպատել խոճկորներին.

7. Ձմռան և ուշ աշնան շրջանում խոճկորների պահպանման և խնամքի տեխնիկան.

8. Խոճկորների կերակրման տեխնիկան և կերի նորմաները.

9. Գաթով կերակրելու նորմաները, կերակրման կարգը և կերցվող կաթին առաջադրվելիք պահանջները.

10. Հասկացողություն կրծի հիվանդու-

թյունների մասին։ Կարողանալ շփումներ կատարել, գիտենալ բժշկության պարզ մեթոդները։

11. Խոճկորների հիվանդության և սնկման հիմնական պատճառները։

4. ԿԵՐԱԿՐՈՒՄ

1. Հասկացողություն խոզի մարսողության գործարանների և մարսողության պրոցեսի մասին.

2. Հասկացողություն կերի միավորի և կերի սննդառության մասին.

3. Ինչպիսի կերեր են տալիս խոզին մսուրային և արոտային շրջանում (հատիկային կերեր, ընդեղեններ, քուսապ, թեփ, արմատապալարապտուղներ, հանքային կերեր, կենդանական ծագում ունեցող կերեր).

4. Տարբեր խմբերի խոզերին տրվելիք կերի հնարավոր նորմաները (մայրերին տարբեր շրջանում, վարազներին, հոտի վերանորոգման կամ գերացման համար նախատեսված մատղաշներին).

5. Քանի՞ անգամ և յե՞րբ պետք է կերակրել, ջրել խոզերին ինչպես արոտային, նույնպես և մսուրային շրջանում։

6. Ինչ ձևով պիտի տրվեն հատիկային

կերերը, արմատապալարապտուղները, խոտը, կանաչ խոտը, կենդանական ծագում ունեցող կերերը և այլն։ Կերակրման կարգը և ինչպես կարելի է նախապատրաստել կերը.

7. Ինչ ձևաս և տալիս փթած, ցրտահարված, բորբոսնած կերերը.

8. Խոզաբուծության մեջ գործադրվող արոտային կուլտուրաները, լավ գիտենալ կանաչ կոնվեյերը.

9. Տարբեր խմբի խոզերի արածեցնելու տեխնիկան.

10. Ծնվող, հղի և ստերջ խոզամայրերի, վերանորոգման և գերացվող մատղաշների կերակրման կարգը.

11. Արտադրող վարազի կերակրման կարգը զուգավորման շրջանում և այդ շրջանից դուրս.

12. Տարբեր խմբի խոզերին վորքան հանքային աղեր և կենդանական ծագում ունեցող կերեր կարելի է տալ.

13. Տարբեր խմբի խոզերի ջրելու կանոնները և կարգը տարվա զանազան ժամանակներում.

14. Ինչպես կատարել կշռումը և ինչպես վորոշել կենդանի քաշի աճը.

15. Գերացման շրջանի տեվողությունը տարբեր խմբերի համար.

16. Կարողանալ կատարել կերերի խմորումը, պրոֆ. Զեվիտսկու մեթոդով.

17. Գիտենալ և կարողանալ կազմակերպել գերացուցիչների տարբեր տեսակներ՝ ճարպային, կիսաճարպային և մսացու։

5. ԽՈԶԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

1. Տարբեր խմբի խոզերի պահպանման և խնամքի կանոններն ու կարգն արոտային և մսուրային շրջաններում.

2. Կիրառել խոզերի զբոսանք, գիտենալ խոզերին դաշտյահների դուրս բերելու կարգը և կանոնները, տարբեր խմբի խոզերի զբոսանքի անհրաժեշտ տեվողությունը.

3. Կիրառել խոզերի մաքրում, դաշտյահների, խոզանոցների ախտահանում, միջանցքների մաքրում.

4. Հասկացողություն ունենալ խոզերին լոգացնելու նշանակությունն ինչպես և նրա ժամանակի մասին տարբեր խմբի խոզերի համար.

5. Առանձին խմբերի համար անհրաժեշտ ջերմության աստիճանը խոզանոցներում.

6. Հասկացողություն լույսի ազդեցության մասին խոճկորների զարգացման աճեցողության վրա։ Գիտենալ խոնավության, միջանցուկ քամու և տեղի նեղության ճնշասակար ազդեցությունը խոզերի առողջության վրա.

7. Գիտենալ բոլոր մեքենաները, գործիքները, վորոնք անհրաժեշտ են խոզերին մաքրելու, կերերը պատրաստելու համար և կարողանալ ոգտվել նրանցով.

8. Ինչպես նախապատրաստել խոզանոցները, մեքանաները, խոզերին մսուրային շրջանն անցնելու, նայելով մսուրային շրջանից արոտային շրջանն անցնելու համար.

9. Հասկացողություն խոզանոցների շինարարության համար տեղ ընտրելու մասին.

10. Խոզանոցներին, խոհանոցներին, ճաշարաններին և այլ շենքերին առաջադրվելիք զոոտեխնիկական առողջապահական պահանջները.

11. Գիտենալ ֆերմայում կամ խորհրդային տնտեսությունում գոյություն ունեցող ոգտագործության սիստեմները.

12. Հակահրդեհային միջոցառումների կիրառումը։

6. ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Տասնորյա, ամսվա, յեռամսյա արտադ-

գական առաջադրանքները դուգավորման, ծնի վերաբերյալ.

2. Գերացման համար առանձնացվող մատղաշների պլանը, բրիգադայի կողմից մատղաշներ աճեցնելու պլանը.

3. Ցերմայի մայր խոզերի համար սահմանված վորակական և քանակական ցուցանիշները։

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքի կազմակերպումը ֆերմայում և աշխատանքի վարձատրում.

2. Խոզապահի իրավունքները և պարտակատությունները.

8. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

1. Ինչպես հայտնաբերել հիվանդ կենդանիներին և նրանց ժամանակին մեկուսացնել.

2. Հասկացողություն խոզերի ամենատարածված հիվանդությունների մասին (ժանտախտ, ռոժա, պարատիֆ, սպիտակ լուծ, սեպտիցեմիա, քոս).

3. Խոզերի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու պրոֆիլակտիկ միջոցառումները.

4. Հասկացողություն ամենից շատ տարածված վարակիչ հիվանդությունների մասին.

5. Հասկացողություն ժանտախտի, ռոժաչի և այլ հիվանդությունների դեմ պայքարելու մեթոդների մասին, պատվաստում կատարել և գիտենալ խողերի խնամքը պատվաստելուց հետո.

6. Գիտենալ վարվել ախտահանիչ նյութերի հետ։

ԶՈՐԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ԶԻԱՊԱՀՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԵԼԻՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Զիապտոնը պետք է գիտենա՝

1. ԶԻԵՐԻ ԲՈՒԾՈՒՄ

1. Զիերի ինչ ցեղեր են ընդունված տվյալ շրջանի համար, հասկացողություն ունենալ ձիու եքստերյերի մասին։ Զիու հիմնական հատկությունները, վորոնք խանգարում են նրա արտադրողականության և հատկապես ժառանգաբար սերնդին անցնող հատկությունները։

2. Ինչպիսի պահանջներ են առաջադրվում հովատակ արտադրողին և մայրերի ընտրության կանոններին։

3. Զուգավորման կամպանիայի նախապատրաստման կազմակերպումը։ Հովատակների և մայրերի նախապատրաստումը և ստուգումը։ Զուգավորման գործիքների նախապատրաստումը։

4. Փորձիչի (պրոբնիկի) ընտրությունը և գիտենա՝ նրա առաջադրվելիք պահանջները։

5. Հովատակների և զամբիկների զուգավորման հասակը։ Կարողանալ վորոշել հովատակի բնավածությունն ըստ նրա վորակի և հասակի.

6. Զուգավորման կայանի աշխատանքը և զուգավորման կամպանիայի շրջանը, կարողանալ կազմակերպել զուգավորումը.

7. Սաուգում անցկացնելու կանոնները, ցանկություն գալու ժամանակը և նրա վորոշելու հատկանիշները.

8. Կարողանալ բաշխել ծածկումները, սահմանել զամբիկների ծածկման հերթականություն.

9. Զուգավորում անցկացնելու տեխնիկան, ձևերը, հովատակների և զամբիկների նախապատրաստումը նախքան ծածկումը։ Ծածկելը, հովատակի խնամքը ծածկելուց հետո։ Կարողանալ ոգտագործել զուգավորման գործիքները և վորոշել նրանց արժեքը։

10. Կարողանալ կազմել զուգավորման կայանի հաշվետվությունը, լրացնել զուգավորման մատյանները.

11. Պատկերացում ունենալ արհեստական սերմանման և նրա նշանակության մասին։

2. ԾԻՆԸ ՅԵՎ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Զամբիկների հղիության տեվողությունը, զամբիկի հղի լինելու նշանները.

2. Կազմակերպել ծնի նախապատրաստումը։ Գիտենալ ծնի մոտենալու ժամանակը։

3. Ցույց տալ առաջին ոգնությունը ծնի ժամանակ.

4. Վորոշել ճիշտ և սխալ ծինը.

5. Գիտենալ խնամել մորուկին և զամբիկին ծնից հետո առաջին որերում.

6. Գիտենալ մորուկին մոր տակը խնամելու կանոնները, կարողանալ կազմակերպել մորուկների զբոսանքը, արոտը, կերակրումը.

7. Կարողանալ մորուկներին ճիշտ և ժամանակին ծծից կտրել.

8. Մորուկների խնամքը ծծից կտրելուց հետո.

9. Կարողանալ մատղաշներին աշխատանքի սովորեցնել։ Գիտենալ մատղաշների տարիքը, յերբ նրանց կարելի յե աշխատանքի սովորեցնել և վորոշել աշխատանքի սովորեցնելու ժամանակը, հաշվի առնելով նրանց զարգացման աստիճանը.

10. Մատղաշներին լծելու և թամբելու կանոնները։

3. ՁԻԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ձիերի և մատղաշների կերակրման և ջրելու կանոնները.

2. Ձիու կերերը, կարողանալ վորոշել նրանց պիտանիությունը կերակրելու համար և Ջրի վորակը.

3. Կազմակերպել անհատական և խմբակային կերակրում։ Գիտենալ ձիերին կերակրել և ջրել համաձայն նրանց կատարած աշխատանքի.

4. Հղի և ծնած մայրերի, մատղաշների, հոլատակ արտադրողի, հիվանդ ձիերի կերակրման ու ջրելու առանձնահատկությունները.

5. Կերերի պահպանումը և նախապատրաստումը նախքան կերակրելը։ Գիտենալ այն կերերը, վորոնք նախապատրաստման կարիք ունեն.

6. Ձիերի մսուրների և կերամանների կառուցվածքը.

7. Կազմակերպել և կատարել հասակավոր ձիերի, մատղաշների արածեցնելը։ Գիտենալ գիշերային արոտի կանոնները.

8. Ծախսված կերերի հաշվառումը.

4. ՁԻԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԽՆԱՄՔՆ ՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Վանդակների կառուցվածքը և գործադրությունը, գոմի ոդափոխությունը։ Լույսի, մաքրության և ջերմության նշանակությունը.

2. Գոմի վանդակի մաքրման կարգը.

3. Ցամքարի տեսակները և նրա վորակը։ Վոր դեպքում այս կամ այն ցամքարը չի կարող ոգտագործվել.

4. Ձիերի մաքրումը։ Գիտենալ մաքրման տեխնիկան և նշանակությունը.

5. Սմբակների տակի և սլաքի մաքրումը ցեխից, հասկացողություն ունենալ պայտելու անկանոնությունների մասին, գիտենալ վերապայտելու և սմբակները մաքրելու ժամանակը.

6. Հղի և ծծվոր մոր, մատղաշների, հովատակ արտադրողի ինչպես և կարմիր բանակին հանձնվելիք ձիերի խնամելու առանձնահատկությունները.

7. Ինչու չաշխատող ձիու համար անհրաժեշտ է մացիոն և վերջինիս կազմակերպումն ըստ ձիերի վերոհիշյալ խմբերի.

8. Ձիերի վորակական կազմն ըստ նրանց ուժի, դիմացկանության, առողջական դրության և այլն։ Պատկերացում ունենալ աշխատանքի ժամանակ նրանց արվելիք հնարավոր բեռնվածության չափի մասին։ Գիտենալ ձիուն ճիշտ աշխատանքի նորմա վորոշել, նարյադ կազմելու ժամանակ.

9. Հղի գամբիկների և ծծմայրերի. ոգտա-

գործման առանձնահատկություններն աշխատանքի ընթացքում և նրանց աշխատանքից ազատելու ժամանակը.

10. Ցերիտասարդ ձիու ոգտագործման առանձնահատկությունները, կարմիր բանակին հանձնվելիք ձիերի ոգտագործումն աշխատանքում.

11. Ցերը և ինչու յե ձիուն հանգիստ տրվում։ Պատկերացում ունենալ կոլխոզի ծանր, միջակ և թեթև աշխատանքների մասին.

12. Ձին հեծնելու և քշելու կանոնները և ձիու հոգնածության նշանները.

13. Ձիերի ընտրությունը զույգ լծելու ժամանակ.

14. Ձիու սարքի պահպանումը, խնամքն ու թեթև վերանորոգումը.

15. Ձիու խնամքի համար անհրաժեշտ գործիքները և նրանց ոգտագործումը.

16. Ձիու աշխատանքի հանձնելու և աշխատանքից ընդունելու կանոնները, կարողանալ ժամանակին նկատել ձիու մեխանիկական ֆատվածքները, գնահատել ձիու ընդհանուր դրությունն աշխատանքից վերադառնալիս.

17. Ձիու աշխատանքի հաշվառում կատարելը.

18. Հսկողություն ձիու խնամքի և պահպանման աշխատանքների վարակի վրա.

5. ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

1. Ձիու հիվանդանալու նշանները.

2. Պատկերացում ունենալ վարակիչ և վոչ վարակիչ հիվանդությունների մասին։ Գիտենալ վարակի տարածման ձևերը և նրա կանխման միջոցառումները.

3. Գոմերի ախտահանումը և ախտահանիչ լուծույթի պատրաստելը.

4. Կարանտինի նշանակությունը, նրա կիրառման կանոնները և հիվանդ ձիերի մեկուսացման նշանակությունը.

5. Առաջին ոգնություն ցույց տալը ձիերին, նրանց մեխանիկական վնասվածքների դեպքում, ծակոցներ, կարողանալ ոգտվել առաջի ոգնության դեղատնակից.

6. Ինչպես չափել ջերմությունը, կլիզմա անել, վերքերին դեղ քսելը, կապելը, կոմպրեսներ դնել և այլն.

7. Գիտենալ ձիերի վատ սովորությունները՝ կծելը, ոնանիզմը, ոդ կուլ տալը և նրանց դեմ պայքարելու միջոցները։

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Բրիգադայի աշխատանքի կազմակերպումը, պարտականությունների բաշխումը բրիգադայի անդամների միջև.

2. Ավագ, կրտսեր ձիապահներ և գիշերապահների պարտականությունները.

3. Ձիապահների աշխատանքի մատյանը և նրանց աշխատանքի գնահատականը.

4. Ձիապահների վարձատրման կարգը։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038204

[104] 5ё

ЦЕНА

А I
3608

[Пров. экз.]